

4040

157
—
n-95

14 JUL 2003

157

Ռ-94

Հ Ա Ս Կ Ե Ռ Ի

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

Գ Ր Ա Գ Ա Ր Ա Ն

26.3
2

XX—XXI

Կ Ի Կ Տ Ա Ր Ո Ռ Ի Մ Ա Կ Ո Կ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ծ Ի Ծ Ա Ղ Ը

Պ Ր Օ Ց . 1 . Ս Ա Կ Ա Մ Բ

Բ Ա Ր Ո Յ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ն Ե Ն Գ Ի Ա Ս Տ Ա Ր Ա Ն Գ Ո Ւ Թ Ը

370

Ջ.66-ՍՈ

Թ ա ը գ . Մ Ի ս ա կ Մ ս Ի Լ Ե ա ն

Թ Ի Յ Ի Մ Լ

Է Լ Ե Ք Ր Ո Յ Ա Մ Ա Մ Բ Տ Պ Ա Ն Ն Ո Ւ . Ն . Ա Ղ Ա Ր Ե Ա Ր Ա Ն Ո Ւ . Պ Օ Լ Ի Ց . 7

1909

7-95 W

«ՀԱՍՈՒՅՐԻ» ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

XX 67

370
2266-ԱՈ

ՎԻԿՏՈՐ ՌՈՒՍՍԿՈՎ

058
ՈՍ-ՁՁԵԶ

ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ

Լոյս են տեսել հետևեալ գրոյկները

- I Երեխայի կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը—Հներիկ Վերնիցի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 25 կ.
- II Երեխայի բունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.
- III Երեխայի ազատագրութիւնը—Կ. Հ. Վենտցելի: Մեծերն ու փոքրերը—տիկ. Իսահակէնի թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.
- IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը—Կ. Ելնիցկու, թարգմ. Մ. Աղ. և Ստ. Լ. 15 կ.
- V Պարզէները ու պատիժները ընտանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
- VI Ռ՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Ծանօթացրէք կեանքի ծագման հետ—տիկ. Սելմերի թարգմ. Ստ. Լ. 15 կ.
- VII Ընտան. դաստիարակութեան նպատակները և հիմունքները.—Պ. Կապտերևի, թարգմ Միս. Աս. 15 կ.
- VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—Ակսել Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 15 կ.

69951

ՄԱՆԿԱԿԱՆ ԾԻԾԱՂԸ

Յաւելած՝ ՊՐՕՅ. Լ. ՍՈՎԱԺ

Բարոյագիտութեան դասաւանդումը:



Թարգ. Միս. Ասիլեան

ԷԼԵԲՐԱՅՈՒԹ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂՆՆՈՒՆԻ ՊՈԼԻԿ. 7
1909

4090
0.7
20-1199

ՄԱՆԿԱՆ ԾԻԾԱՂԸ

Նրա հոգեբանական, մանկավարժական եւ
առողջապահական նշանակութիւնը

Ա.

Ամերիկացի Գէմֆրի բժիշկը Ֆիլադելֆիայում նշանակեց մի որբանոցի բժիշկ: Նրան շատ զարմացրեց հետեւեալ տարօրինակ երևոյթը:—Այդ որբանոցն ունէր երկու զուգընթաց բաժանմունք, որոնք բոլորովին նոյն պայմանների մէջ էին գտնուում: Մինչդեռ ա. բաժանմունքի մանուկները ունէին առողջ, զւարթ և ուրախ տեսք, ընդհակառակն, բ. բաժանմունքի մանուկներն աչքի էին ընկնում իրանց վտիտ, թարշամած, դանդաղկոտ տեսքով. նրանց կերպարանքի վրա պարզ նկատուում էր մի օտարոտի թախիծ: Ա. բաժանմունքի երեխաները շատ հազիւ էին հիւանդանում և հիւանդութիւնն էլ սովորաբար անցնում էր առանց որևէ բարդութիւնների. ընդհակառակն, բ. բաժանմունքի երեխաները հիւանդանում էին յաճախ և հիւանդութիւնը տևում էր երկար: Գէմֆրին երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ այդ տարբերու-

թեան պատճառը: Վերջապէս նա ուշադրութիւն դարձրեց որբանոցի երկու բաժանմունքի դաստիարակութեան եղանակի վրա, թէև երկու բաժանմունքների դաստիարակութեան եղանակը նոյն էր, նոյն յանձնաժողովի ձեռքով մշակւած: Աչալուրջ բժշկի ուշադրութիւնից չը խուսափեց մի երեւոյթ՝ նա նկատեց որ երկու բաժանմունքների կառավարչուհիների բնաւորութիւնները խիստ տարբեր են միմեանցից: Ա. բաժանմունքի կառավարչուհին իբնէ մի ուրախ, զւարթ անձ էր. նա ամեն կերպ աշխատում էր իր խնամքին յանձնւած մանուկներին ուրախացնել, զւարճացնել: Իսկ Բ. բաժանմունքի կառավարչուհին— թէև անկասկած մի պատկառելի անձնաւորութիւն— բայց և այնպէս լուրջ բնաւորութեան տէր մի կին էր. նա խըստութեամբ իրագործում էր ծրագիրը, թոյլ չէր տալիս երեխայական չարութիւններ, չէր սիրում երեխաների ծիծաղը:

Գէմֆրին կամեցաւ փորձով համոզել՝ թէ կառավարչուհիների տարբեր բնաւորութիւններն ունենալ արդեօք ազդեցութիւն մանուկների առողջութեան վրա, թէ ոչ: Այդ նպատակով Գէմֆրին առաջին բաժանմունքից մի քանի երեխաներ փոխադրեց երկրորդ բաժանմունքը: Մի կարճ ժամանակից յետոյ հետևանքն երևաց շատ արագ՝ առողջ, զւարթ և ուրախ երեխաները փոխեցին դարձան տխուր, թարշամած. նրանք կորցրին ախորժակը, զբաղմունքի սէրը և նրանց առողջութիւնը սկսեց արագ վատանալ: Ընդհակառակը, «լուրջ» կառավարչուհու բաժանմունքից «ուրախ» կա-

ռավարչուհու բաժանմունքը փոխադրւած երեխաներն ուրախ, միշտ ծիծաղկոտ հասակակիցների մէջ շատ շուտ ստացան ուրախ տրամադրութիւն, աւելի առողջացան, քաշն էլ աւելացաւ: Այս փորձն առիթ եղաւ նորանոր դիտողութիւնների, որոնք Գէմֆրուն բերին այն հաստատ համոզման՝ թէ ծիծաղը բարեբար ազդեցութիւն ունի մանուկների առողջութեան վրա:

Ամերիկացի բժշկի այդ դիտողութիւնները հաստատել են և ուրիշ բժիշկներ իրենց արած դիտողութիւններով, թէ և դժբախտաբար դեռ սակաւաթիւ, որովհետև մինչև այժմ էլ շատերն այդ այնքան էլ լուրջ խնդիր չեն համարում, թէև իսկապէս խիստ կարևոր նշանակութիւն ունի. ուրեմն այդ ուղղութեամբ հետազոտութիւններ և դիտողութիւններ անելու ընդարձակ ասպարէզ կայ դեռ ևս: Այս վերջին հանգամանքի վրա մատնանիշ է անում և Ֆրանսիացի բժիշկ հեղինակ Ֆլէրին: Նա կոչ է անում բժիշկներին և մանկավարժներին, յորդորելով նրանց ուշադրութեամբ վերաբերել մանկան ծիծաղին և այդ իրենց մանրակերպիտ դիտողութեան նիւթ դարձնել: «Ուսումնասիրեցէք անյապաղ ծիծաղի բնախօսական և առողջապահական ազդեցութիւնը մանկան վրա. այդ ուսումնասիրութիւնը կարող է բոլորովին կերպարանափոխել դաստիարակութեան սիստեմը, կարող է ծառայել իբրև նոր հիմք բնաւորութեան դաստիարակութեան համար», ասում է Ֆլէրին:

Բ.

Ի միջի այլոց և անզլիացի բժիշկ Ուելլեամ Ուէլլը գնահատելի դիտողութիւններ ունի արած այն մասին, թէ մայրերի և դաստիարակչուհիների բնաւորութիւնը մանուկների առողջութեան վրա ինչ ազդեցութիւն է ունենում: Ուէլլը իբրև տանու բժիշկ մուտք է ունեցել շատ թէ հարուստ և թէ աղքատ ընտանիքներում. նա այդ ընտանիքներում արած դիտողութիւնների հիման վրա՝ եկել է այն հաստատ համոզման, թէ այն մայրերի մանուկներն են մեծ մասամբ առողջ, գէթ նեարդներով առողջ, որոնք իրանց ուրախ են պահում երեխաների ներկայութեամբ: Ընդհակառակը, տխուր, լուրջ, մուռլ մայրերի երեխաներն լինում են նեարդային, դիւրագրգիռ և քմահաճ. այդ դիտողութիւնները մանաւանդ ճիշտ են քաղաքացի միջին դասակարգի վերաբերմամբ: Ամեն ընտանիքում, որտեղ մայրն ուրախ տրամադրութեան տէր էր լինում և իր ուրախ տրամադրութիւնը արտայայտում էր երեխաների ներկայութեամբ, այդ տեսակ մօր երեխաները մեծանում էին առողջ, հիւանդանում էին քիչ և անխուսափելի հիւանդութիւնները տանում էին համեմատաբար հեշտ: Ընդհակառակը, այն ընտանիքներում ուր մայրերը լինում էին բժախնդիր, խստապահանջ, լուրջ, իրանց պահում էին երեխաների առջ իբրև անմատչելի էակներ և պահանջում էին նրանցից դէպի իրանց անձը մի առանձին բացառիկ հնազանդութիւն և յարգանք, փոխանակ անբռնադատ մանկական անկեղծ

սիրոյ, ուր մօր ներկայութեամբ մանուկներին արգելած էր խնդալ, ծիծաղել և չարութիւն անել—այդ տեսակ ընտանիքների երեխաները մեծանում էին նեարդային, հիւանդոտ և դիւրագրգիռ:

Ապա Ուէլլը իր դիտողութիւնների առարկայ դարձնելով դիշբրօթիկ դպրոցները և ապաստարանները, ինչպէս իր նախորդ Դէմֆրին, նա ևս եկաւ այն եզրակացութեան, թէ այդ հիմնարկութիւններում, ուր ղեկավարներն ուրախ բնաւորութեան տէր կանայք էին, երեխաներն առողջ էին և նեարդային թուլութիւններն աւելի սակաւաթիւ: Բացի դրանից Ուէլլն եկաւ այն հաստատ համոզման, որ այն տարածւած կարծիքը՝ իբրև թէ մանուկները ծնւում են պատրաստի «Չղայնութեամբ» և որոշեալ խառնւածքով, այսինքն՝ ծնւում են իբնէ լուրջ, տխուր կամ թէ ուրախ՝ չի համապատասխանում ճշմարտութեան, գէթ բաւական չափազանցած է: Ուէլլի կարծիքով Չղայնութիւնը, խառնւածքը, բնաւորութիւնը՝ այս բոլորը մշակում են պարագաների և մանկանը շրջապատող մարդոց ազդեցութեամբ: Այդ դիտողութիւնները հարկադրեցին Անզլիացի բժշկին՝ մի յորդորով դիմել կանացի սեռի բոլոր ներկայացուցիչներին, բոլոր մայրերին, դաստիարակչուհիներին: Այդ յորդորի էութիւնը կարելի է յայտնել երկու խօսքով—«եղէք ուրախ»:

Մի ուսու բժիշկ Ուէլլի միտքն աւելի ընդարձակելով, դիմում է կանացի սեռի այն բոլոր անձանց, որոնք որևէ առընչութիւն ունեն երեխաների հետ, յորդորում է նրանց և ասում. «Եղէք ուրախ ձեր երեխաների, քոյրերի, եղբայրների համար, ձեր խնամքին յանձնւած մատաղ կեանքերի, մանուկների համար...»

Եղէք ուրախ ոչ միայն նրանց ներկայութեամբ, այլ աշխատեցէք ծիծաղել որքան կարելի է շատ, ծիծաղելով մանուկների հետ, աշխատեցէք հնարել այնպիսի կատակներ, դարձալիքներ, որոնք կարողանան խընդացնել մինչև անգամ մռայլ և տխուր երեխաներին, ստիպեն նրանց ուրախանալու: Հաւատացնում եմ ձեզ՝ ծիծաղը առողջութիւն է»:

Գ.

Ծիծաղի ազդեցութիւնը մանկան կազմաւածքի վրա դիտնականորէն ապացուցել է Լազրանժը: Նա ծիծաղը համարում է խնդութեան և հոգու կենսուրախ տրամադրութեան շօշափելի արտայայտութիւն: Լազրանժն ամենից առաջ ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ ծիծաղի առողջապահական և հոգեկան նշանակութիւնը քննադրմամբ հասկանում է իւրաքանչիւր մի մայր: Երեխային ծիծ տալու ժամանակ իւրաքանչիւր մայր աշխատում է նրան ծիծաղացնել, որովհետև այդ ժամանակ մանուկն աւելի շառագունում, թարմանում և աշխուժանում է: Երբ մանուկն սկսում է արդէն բաւականաչափ աճել, նրա մէջ զարգանում է ծիծաղի պահանջ, որ արտայայտում է ամեն մի յարմար դէպքում: Յուրտը, ձիւնը, երեսին ցայտած ջրի կաթիլները, բախիւնը, վայր ընկնելը, այս բոլորն ստիպում են նրան ծիծաղել: Լազրանժի կարծիքով ծիծաղը, ուրախութիւնը իբրև նեարդները գրգռող և կարևոր գրգռիչ միջոցնեո աւելի անհրաժեշտ են

մանուկների համար, քան թէ հասակաւորների. այս վերջինները ունեն նեարդները գրգռող ուրիշ գրգռիչ միջոցներ, օրինակ՝ այրական հասակի զօրեղ յուզմունքը, զայրոյթը, հիացման ուժգնութիւնը, բուռն ոգևորութիւնը: Մանուկը չունի այդ բոլորը. ուստի ուրախութեան և ծիծաղի նա այնպիսի կարիք ունի, ինչպէս բոյսը լուսոյ: Ծիծաղից զուրկ մանուկը թարշամում է: Մինչդեռ առողջ ծիծաղը և նրանից անբաժան խնդութիւնը կենդանացնում է կազմաւածքը, ընդհակառակը՝ տխրութիւնը դանդաղեցնում է կենսական գործառնութիւնները և սրտի գործունէութիւնը, առաջացնում է կրծքի ճնշում, որ կոչւում է անձկութիւն, ձանձրոյթ: Թախիծը, ինչպէս և ձանձրոյթը, թուլացնում է գործարանների գործունէութիւնը: Ձանձրոյթը նոյնպիսի վնասակար ազդեցութիւն ունի սննդառութեան վրա, ինչպէս և տրտմութիւնը: Ուրախութիւնն իսկոյն և եթ զօրեղ շարժման մէջ է դնում նեարդները. նեարդներն ևս այդ զօրեղ շարժման բարերար ազդեցութիւնը տարածում են կենսական բոլոր գործառնութիւնների վրա: Ձանձրոյթն, ընդհակառակն, բոլոր գործարանները զօրացնող այդ եռանդն փակում է ուղեղային վանդակների մէջ. իսկ ուղեղային գրգռման անբաւարարութիւնն առաջացնում է մտաւոր և ֆիզիքական ընդարմացում: Ուրախութիւնից, խնդութիւնից զուրկ մանկան տեսքը ներկայացնում է մի տխուր պատկեր: Նրա կերպարանքն այն աստիճան նմանում է հիւանդի տեսքի, որ համարեա միշտ աշխատում են նրա կենսական գործառ-

նութիւնների այդ խանգարումը բացատրել որևէ հիւանդութեամբ. մինչդեռ այդ հիւանդոտ վիճակը ձանձրոյթի Ֆիզիքական արտայայտութիւնն է: Ենթադրելով թէ այդ տեսակ երեխան ունի սակաւարիւնութիւն և բնածին թուլութիւն, սկսում են դու տալ երկաթին կամ քինոն. մինչդեռ նրա առողջութիւնը վերականգնելու համար հարկաւոր է գործադրել բարոյական ազդեցութիւն, որը միայն կարող է խորտակել նրա նեարդային կենտրոնների ընդարմացումը:

Իսկ այդ տեսակ բարոյական ներգործութիւնն է միմիայն հոգու կենսութեան տրամադրութիւնը և նրա ամենագլխաւոր յայտարարը—անկեղծ, սրտաբուխ ծիծաղը:

Գ.

Թէ ինչ նշանակութիւն ունի մանկան կեանքի համար հոգու կենսութեան տրամադրութիւնը, այդ մասին թանգագին մտքեր է յայտում Գիւլյօն իր «Դաստիարակութիւն և ժառանգականութիւն» աշխատութեան մէջ:

Համեմատելով միմեանց հետ հոգու վատ և կենսութեան տրամադրութիւնները, Գիւլյօն ասում է. «նրանցից առաջինը, այսինքն՝ հոգու վատ դրութիւնը՝ հակահասարակային դրութիւն է: Այդ դրութիւնը չափազանց բարդ և յամառ է. մանուկն որքան շուտ սովորի նրան յաղթել, այնքան աւելի լաւ: Չարասրտութիւնը, անհամբերութիւնը և հոգու այդ տեսակ այլ

սուր հիւանդութիւնները սկզբնորում հեշտ է ընկճել. բայց յաճախ կրկնելով, նրանք հոգու շուրջը տարածում են մի առանձին մտայլ մթնոլորտ և արտայայտւում են հազարաւոր ձևերով. այդ վիճակից դուրս գալ, ազատւել խիստ դժուար է: Այդ մթնոլորտն հոգու վատ տրամադրութիւնն է: Այն մանուկը, որին ամեն մի քայլափոխում չնչին որևէ բանի համար անտեղի արգելում, սաստում են, ի վերջոյ կրծկլուում է, առանձնանում իր մէջ, անձնատուր է լինում իր անորոշ վշտին, և դրա հետևանքն էլ լինում է այն, որ նրանից դուրս է գալիս մի անբախտ, թոյլ և վհատ մարդ: Հոգու վատ տրամադրութեան մէջ թագնւած են սաղմային դրութեամբ թշուառութիւններն այն անկայուն բնակորութիւնների, որոնցով լի է արդի հասարակութիւնը: Այդ պատճառով երեխաներին պիտի ընտելացնել ուրախութեան, նրանց պիտի սովորեցնել՝ ձեռք բերելու հոգու հաստատ և լաւ տրամադրութիւն. այդ յատուկ է այն մարդոց, որոնց սիրտը պարզ է, մաքուր է, որոնք ոչ մի բանում չեն յանդիմանում իրենց կամ ուրիշներին: Բախտաւոր մանուկն աւելի գեղեցիկ է, աւելի քաղցրաբարոյ, աւելի անկեղծ և հաճոյական. նրա անկեղծ ծիծաղն ուրախացնում, յուզում է մեզ, ինչպէս նոր ճշմարտութեան գիւտը»:

Ահա այսպէս, Գիւլյօյի կարծիքով դաստիարակութեան կարևոր խնդիրներից մէկն է՝ մանուկների մէջ անշէջ պահել նրանց հոգու զարթ տրամադրութիւնը:

Ե.

Վերև բոլոր յիշածներէց հետևում է անկասկած, որ երեխաների մէջ ուրախութեան և ծիծաղի պահանջը բնական և իրաւացի է: Արդեօք հարկաւոր է այդ պահանջը փայփայել, խրախուսել, ուրիշ խօսքով՝ օժանդակել բնութեանը:— Ծիծաղի հակառակորդները պատասխանում են՝ ոչ. իսկ մենք ասում ենք՝ այո՛, այո՛, այո՛: Ծիծաղի թշնամիներն ասում են ոչ, իբրև թէ ծիծաղը՝ մանաւանդ յաճախակի, բարձրաձայն, դատարկ ծիծաղը նշան է անկրթութեան, մտաւոր սահմանափակութեան: Իսկ մենք ասում ենք այո՛, որովհետև ծիծաղի մէջ մանկավարժութեան տեսակէտից ոչինչ հակառակ չենք գտնում և լիովին համակարծիք ենք նրանց, որոնք ընդունում են ծիծաղի կարևոր նշանակութիւնը առողջութեան համար:

Ծիծաղը, ինչպէս երևաց յիշած կարծիքներէց, որին համաձայն են բոլոր խելացի բժիշկները՝ պահանջում է հոգու զւարթութիւնը և նեարդային համակարգութեան կանոնաւոր գործունէութիւնը և նպաստում է կանոնաւոր մարսողութեան: Սրտանց, անկեղծ ծիծաղելն երեխայի համար այնպիսի մի բնական պահանջ է, ինչպէս ուտել և խմելը և համարեա նոյնքան կարևոր:

«Եղէք ուրախ և ծիծաղեցէք աւելի շատ, և թէ կամենում էք լինել առողջ», ասում է Ֆրանսիացի մի բժիշկ՝ Ֆելիքս Բրէմօնը, որն ուսումնասիրել է ծիծաղի ազդեցութիւնն առանձնապէս չափահասների առողջ-

ջութեան վրա: Եթէ չափահասները իրենց առողջութիւնը պահպանելու համար անհրաժեշտ կարիք ունեն ուրախութեան և ծիծաղի, որքան անհրաժեշտ է նոյնը մանուկների համար, ինչպէս յիշեցինք վերը:

Բրէմօնն ի միջի այլոց մատնանիշ է անում և ծիծաղի առողջապահական և բուժիչ ներգործութիւնը թոյլ կրճքի վրա: Ծիծաղը, ասում է Բրէմօնը, դուրս է մղում օդը, կրճքից դէպի թոքափողի վերին ծայրերը և իր ուժով ներս թափանցում նրանց մաղասաին պատերի մէջ: Մանաւանդ մանուկների համար ծիծաղն ունի առանձին կարևոր նշանակութիւն, որովհետև նրանց մէջ յաճախ են պատահում նիհար, կուրծքը ներս ընկած, խանգարած մարսողութեամբ, ախորժակ չունեցող և այլ երեխաներ: Այդ հանգամանքն ևս առաւել ստիպում է ընդունել այն կարծիքը, թէ առողջ, անկեղծ, անբռնադատ ծիծաղը և ուրախութիւնն անհամեմատ կարևոր և առողջարար են, քան թէ դանազան տեսակ «մննդարար» կոչւած նիւթերը ուժերը կազդուրող պեպտոնները և դեղերը:

Նորագոյն գիտութիւնը հաստատել է այն փաստը, թէ մանուկն աշխարհ է գալիս բնաւորութեան յայտնի, որոշ, անհատական առանձնայատկութիւններով: Ծնողներից և դաստիարակներից է միայն կախած այդ անհատական առանձնայատկութիւններին ուղիղ ընթացք տալ:

Կարելի է համարձակ ասել, որ բոլոր երեխաներն իրանց առաջին հասակում ծիծաղելու ցանկու-

թիւն ունեն (բացառութիւն են կազմում միայն հիւանդ երեխաները): Մանուկը ծիծաղելու համարեա այնպիսի մի պահանջ է զգում, ինչպէս շնչելու, ծիծուտելու և այլն: Բայց նա իր անօգնական դրութեան մէջ կարիք ունի մօր կամ դայեակի խնամակալութեան: Եւ մայրերը, ինչպէս յիշել ենք, մանուկներին ծիծաղեցնելու և զւարճացնելու համար հնարում են զանազան միջոցներ: Առաջին միջոցը— իրեն՝ մօր ուրախ տրամադրութիւնն է: Մօր տրամադրութիւնը, ինչպէս մի ժառնիսական հեղուկ հաղորդում է մանկան, և մօր ուրախ ու զւարթ տրամադրութիւնը խնդացնում և զւարճացնում է ամենամոռայլ մանկանն անգամ:

Դժբախտաբար կան ծնողներ, որոնց խիստ երկիւղ է ազդում մանկան ուրախութիւնը: Նրանք կարծում են թէ երեխաների ծիծաղը հարկաւոր է զսպել և նրանք առանց որևէ խղճահարութեան ստիպում են մանուկներին վերջ տալ չափազանց աղմկալից ծիծաղին, չափազանց կենդանութիւն, իրարանցում առաջացնող ուրախ խաղին, և այդ մեծ սխալ է նրանց կողմից: Կանտը, որ համարում է ամենամոռայլ փիլիսոփաներից մէկը, ասել է հետևեալ նշանաւոր խօսքերը. «Ուրախութիւնը չի կարող լինել չափազանց, որովհետև նա առաջանում է բարութիւնից. ընդհակառակը, տրտմութիւնը կարող է լինել չափազանց, որովհետև առաջանում է չարութիւնից»: Այդ խօսքերը թող անմոռաց պահեն նրանք, որոնք կամենում են մանկան ուրախութիւնը որոշ նեղ շրջանակի մէջ սեղմել ու կաշկանդել: Այդ տեսակ մեծացած երեխաները նոյսիսկ ման-

կական և պատանեկան հասակից կեանքի վրա նայում են մոռայլ, յուսահատ և յոռետես. նրանք չունեն հին «հելլէնների» կենսուրախ, զւարթ և յուսալից հայեացքը թէ դէպի կեանքն առհասարակ և թէ դէպի իրենց անձն, իրենց ապագան:

Այդ կողմից զարմանալի է անգլիացի մանուկը: Նա ուրախ, զւարթ և կայտառ է. նրա կերպարանքի վրա ճառագայթում է իր սեփական գոյութեան բախտաւորութեան զգացումը. նրա մէջ եռում են ուժերն ու յոյսերն իր ապագայ կեանքի անխուսափելի բախտաւորութեան:

Անգլիացոց մասին առհասարակ այն կարծիքն է տիրում, իբրև թէ նրանք մի տխուր, ծեքծեքուղ ժողովուրդ են: Շատ է խօսւում անգլիացու մաղձոտութեան մասին: Բայց նայեցէք, թէ անգլիացիք յրջան աշխատանք են գործ դնում, որպէսզի իրենց երեխաներին մեծացնեն կենսուրախ, նրանց մէջ վառ պահեն զւարթութիւն և ուրախութիւն: Նրանք հնարում են ամեն տեսակ զւարճութիւններ, խաղեր, երեխաների ձեռքը տալիս են ուրախ բովանդակութեամբ գրքեր, պատկերներ, և այն աստիճանի ծիծաղաշարժ, որ ումանց «լուրջ» մանկավարժների հայեացքով թւում են մինչև անգամ անմիտ. մէկ խօսքով նրանք ամեն տեսակ միջոցներով աշխատում են մանուկների մէջ վառ պահել սէր դէպի ծիծաղը, լիովին վստահ լինելով, որ այդ բոլորն ամենևին արգելք չի լինի նրանց զարգացմանը, չի խանգարի, որ ապագայում նրանք գործունեայ և լուրջ մարդիկ լինեն: Իհարկէ, ինչպէս ամեն

տեղ, նոյնպէս անգլիացիները մէջ ևս լինում են մանկավարժներ, որոնք աշխատում են մանուկներին ներշնչել լրջութիւն, բայց այդ բացառութիւններն աննշմարելի են դառնում այն խելացի դաստիարակների և ծնողների ահագին մեծամասնութեան մէջ, որոնք ճանաչում և ընդունում են մանկական առողջ ծիծաղի խիստ մեծ նշանակութիւնը:

2.

Բազմաթիւ դիտողութիւնները ցոյց են տալիս, որ տխրութեան և հիասթափութեան հետեանքը լինում է առանձնութիւն, իսկ առանձնութիւնը, քաշածութիւնը ծնեցնում է այն գաղտնի ախտերը, որոնք խորտակում են և կազմաքայքայում, և ուղեղը, և կամքը. ապա այդ ախտերը մոռացնել տալու համար նոր սկսում են գործադրել զանազան ֆիզիքական խաղեր, մանկավարժական - բժշկական զրուցատրութիւններ, ֆիզիքական, մտաւոր աշխատանքներ և այլն: Մինչդեռ մեծ մասամբ այդ վտանգաւոր ախտերի առաջն կարելի էր առնել, եթէ վաղօրօք առողջ ծիծաղի միջոցով մանուկների մէջ զարգացրած և խրախուսած լինէին զարթ և կենսուրախ տրամադրութիւն:

Այդպէս, ամեն կերպ պէտք է նպաստել, զօրացնել, խրախուսել մանուկների մէջ ուրախ, զարթ տրամադրութիւնը, թոյլ պէտք է տալ, որ նրանք շատ յաճախ սրտանց և անկեղծ ծիծաղեն. ահա այդ է խելացի առողջապահական գլխաւոր միջոցներից մէկը: Բայց

դժբախտաբար այդ կարծիքին հակառակ կան դեռ շատ մանկավարժներ, որոնց աչքում ծիծաղկոտ մանուկն արժանի է յանդիմանութեան:

Թէ ինչ աստիճանի է հասնում այդ սխալ հայեացքը երեխաների «լրջութեան» մասին, երևում է այն փաստից, որ մի բանի մանկավարժներ աշխատում են մանկան առօրեայ կեանքի գործածութիւնից դուրս վանել այն ուրախ գաւեշտական պատկերները, ուր կենդանիները նկարած են ծիծաղաշարժ կերպարանքներով: Այդ տեսակ մանկավարժներից մէկը, օրինակ, հակառակ էր մանուկների ձեռքը տալ այն պատկերները, որոնց վրա նկարած էին հովանոցը զլուխներին բռնած դաշտում զբօսող նապաստակներ. նրա կարծիքով իբրև թէ այդ տեսակ նկարները ծուրը հասկացողութիւն են տալիս երեխաներին կենդանիների կեանքի մասին, իբրև թէ նրանք կարող են համոզմունք կազմել, թէ նապաստակները շրջում են հովանոցներով: Եթէ այդ կարծիքով առաջնորդենք, գործածութիւնից պէտք է դուրս վանենք և շատ հէքիաթներ, օրինակ՝ «Վօշիկ հագած կատուն», որովհետև այդ տեսակ հէքիաթը կարող է երեխաների մէջ հաստատել այն կարծիքը, թէ կատունները զբօսնում են կօշիկներով:

Այդ տեսակ մանկավարժները պաշտպան հանդիսանալով «սկզբնական դաստիարակութեան լրջութեան» աշխատում են ի բնէ ուրախ, անհոգ զարմանել լուրջ պատանիներ, որոնք վերջնականապէս հասնում են նրանցից վտիտ, ձանձրացող, տխուր և հիւանդացի:

1004
1566



և դժգոհ երեխաներ: Հիմա հարցնենք այդ մանկավարժ-ներին՝ ո՞րն է արդեօք աւելի հաճելի և լաւ, ձեր դաստիարակած երեխան լինի ուրախ, և առողջ թէ՞ լինի նիհար և հիւանդոտ, բայց լուրջ:

է.

Մանուկների մէջ, նոյն իսկ արւեստական կերպով, զւարթութիւն, ուրախութիւն և ծիծաղ առաջացնելու և պահպանելու սակաւաթիւ միջոցներից ամենապիտանորը զւարճութիւններն են.

Բայց դժբախտաբար վերջին ժամանակները աւելի հոգս են տանում, որ զւարճութիւնները մանուկներին օգտակար լինեն մտաւոր կողմից, ընդարձակեն նրանց գիտութեան հորիզոնը, զարգացնեն նրանց գեղարւեստական ճաշակը և այլն, քան թէ իսկապէս նրանց զւարճացնեն և ուրախացնեն: Եւ բացի դրանից, շատ սակաւաթիւ են այնպիսի մանկական խաղեր, որոնք մտաւոր զարգացման հետ կարողանային մանուկներին անկեղծ ծիծաղացնել և ուրախացնել: Մինչդեռ երեխային անկեղծ ծիծաղեցնելու և զւարճացնելու համար շատ բան չի պահանջում: Նայեցէք բոլորովին առողջ երեխաների վրա, երբ նրանք, օրինակ՝ խաղում են տապանուկ կամ ֆնդակ. ինչպիսի ուրախութիւն է փայլում նրանց երեսներին երբ դրանցից որևէ մէկը ծիծաղի առիթ է տալիս, ինչպէս սրտանց կչկչում են: Այդ ժամանակ հարկաւոր չի, որ մարդ բժիշկ կամ հոգեբան լինի ապացուցանե-

լու՝ թէ մանուկների համար ծիծաղն առողջարար է:

Երեխաներին ծիծաղեցնող և զւարճացնող նիւթերի շարքում կարող է առաջնակարգ դեր կատարել և ընթերցանութիւնը: Ասում ենք կարող է, որովհետև մինչև այժմ մանկան գրականութիւնը դեռ շատ աղքատ է զաւելջտական գրւածքներով, *) իսկ եղածներն էլ արհամարհանքի են մատնւած մանկական գրականութեան մէջ կեղծ լրջութիւն քարոզողների կողմից: Նոր կարգաւ սկսող երեխայի ձեռքն աշխատում են այնպիսի գրքեր տալ, որոնք հաղորդէին նրան որևէ գիտելիք բնական պատմութեան, բնութեան երևոյթների, շրջապատող կեանքի մասին և այլն: Այն գրքերը, որոնք չեն բովանդակում իրենց մէջ մանկան մտաւոր հորիզոնն ընդարձակող այդ տեսակ տեղեկութիւններ, դուրս են ձգւում մանկական ընթերցանութեան համար օգտակար համարւած գրքերի ցուցակից:

Մանկական գիրքը, ասում են «լրջութեան» երկլրպագունները, պէտք է բարձրացնի մանկան բարոյական զգացումները, առաջացնի սէր դէպի գեղեցիկը, ազնիւը, վսեմը. այդ գիրքը նրա մէջ պէտք է կազմակերպի բնաւորութիւն և համոզմունք. նրա մէջ մատաղ ընթերցողը պէտք է գտնի դիտողութիւններ մարդկանց կեանքի մասին, բնութեան մասին. այդ գրքով նա պէտք է ծանօթանայ ժողովուրդների անցեալ և ներկայ կեանքի հետ և այլն և այլն: Այդ բո-

*) Այդ կողմից առաւել աղքատ է հայոց մանկական գրականութիւնը: Մ. Թ.

լորն անպայման ճիշտ են. բայց այդ տեսակ գրքերի հետ զուգընթաց մենք կը ցանկայինք տեսնել իւրաքանչիւր մանուկ ընթերցողի ձեռքին և ուրախ բնաւորութեան գրքեր, որոնք հետամուտ չեն այդ տեսակ բարձր գաղափարների, այլ միայն նպատակ ունեն վառ պահել մանուկների մէջ զւարթ տրամադրութիւն և ծիծաղի ու խնդութեան նիւթ մատակարարեն նրանց:

Չընայելով դրան, շատ մանկավարժներ ու մանկական գրականութեան շատ ինքնակոչ քննադատներ մանկական գաւեշտական մանրավէպերի և չափազանցրած գրւածների դէմ վայնասուն բարձրացնելով, քիչ է մնում պահանջեն՝ ոչնչացնել այդ գրւածքները, իբրև ֆլասակար և կորստաբեր գրքեր:

Մեր խորին համոզմունքով այդ տեսակ մանկավարժները մեծ մեղք են վերցնում իրենց հոգու վրա՝ կամենալով մանուկների մէջ խեղդել ծիծաղի պահանջը. նոյնպէս մեծ մեղք են գործում այն քննադատները և գրախօսները, որոնք եռանդով աշխատում են սպանել և ոչնչացնել մանուկների համար գրւած այն ծաղրաշարժ և գաւեշտական գրւածքները, որոնց նպատակն է միմիայն ևեթ զւարճացնել, խնդացնել և ծիծաղացնել երեխաներին:

«Ուրախութիւնը և զւարճութիւնները նոյնքան անհրաժեշտ են մատաղ սերնդին, որքան կերակուրը և ըմպելիքը. դրանցով է պահպանւում նրանց առողջութիւնը», ասում է Լիւտերը: Եւ հաղիւ թէ գտնւի որևէ խելացի բժիշկ կամ փորձառու դաստիարակ, որ համաձայն չը լինի այդ խօսքերին:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ
 ԴԱՍԱԿԱՆԴՈՒՍԸ

57951
 1001

Թարգ. Միս. Ասիլեան

Կանոնաւոր դաստիարակութեան ամենակարևոր հիմունքներից մէկը բարոյականութիւնն է: Ահա այդ պատճառով բարոյականութեան ուսուցումը պէտք է մտնի թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցների ծրագիրների մէջ: Վերջինների համար ևս առաւել կարևոր է: Կինն է մանկան առաջին դաստիարակը. նա է ուղղութիւն տալիս մանկան մէջ նոր արթնացող զգացումներին և հասկացողութիւններին. նա է ազդում մանկան հոգու վրա, տպաւորում նրա սրտում այն բոլոր մտաւոր և բարոյական սկզբունքները, որոնց կարևոր ազդեցութիւնը կերևում է մանկան յետագայ ամբողջ կեանքի մէջ. յաճախ անհատի գործունէութեան եղանակի և վիճակի բացատրութիւնը պէտք է փնտռել նրա սկզբնական սովորութիւնների և մայրական ազդեցութիւնների մէջ: Մանկութեան առաջին տարիներում արդէն ուրւագծւում և ամրապնդւում են անհատական յատկութիւնները:

Եթէ այդ այդպէս է (իսկ այդ ժխտել անկարելի է), ուրեմն ըստ ինքեան հասկանալի է, թէ որքան կարևոր է, որ կինը դպրոցում ուսանի բարոյականութեան բոլոր հիմնական սկզբունքները:

Մանուկը դպրոց մտնելով արդէն օժտւած է որոշեալ ուղղութեան ընդունակութիւններով: Նա այլևս

մի վայրի անասուն չէ, այլ աւելի կատարեալ արարած, որի մէջ մաքառում են բնական անձնասիրութիւնը և նորածիլ կրքերը այն դրդիչներին հետ, որոնք մարդու արժանիքն են կազմում: Վերջիններս կարելի է անւանել բարոյական դրդիչներ, որոնք կազմւած են դեռ ևս աղօտ գաղափարներից, անգիտակցական ձգտումներից. նրանք իրանց մէջ բովանդակում են զգացումների և բանականութեան նշաններ: Որքան և դրանք լինեն թոյլ, բայց և այնպէս դրանց մէջ թագնւած է բարոյականութեան և առաքինութեան սաղմը: Ժիտեղ այդ դրդիչներին գոյութիւնը կը նշանակի չընդունել թէ հէքիաթներ լսելու ժամանակ մանուկներն ընդունակ են հրճել սխրագործութիւններով, ատել ստորութիւնները. նոյնպէս չի կարելի չը նկատել, որ դպրոցական մանուկները կազմում են մի փոքրիկ հասարակութիւն, որ կառավարւում է իր սեփական, բայց ճշմարիտ օրէնքներով. մանուկներն այդ օրէնքները հասկանում և պահպանում են շատ խիստ և ճիշտ: Այդ սկզբնական և սաղմային գիտակցութեան հետ մանուկն ունի և մի ուրիշ ընդունակութիւն, որով նա առաւել տարբերւում է կենդանուց, դա կամքն է: Կարիք չը կայ ապացուցանելու, որ մանուկն ընդունակ է սաստիկ կամեցողութեան: Յաճախ կարծում են թէ դաստիարակութեան նպատակն է արմատախիլ անել այդ բուն համբի ազատութիւնը: Պէտք է զգուշանալ մանկան մէջ ոչնչացնելու այդ ընդունակութիւնը, այլայպէս նրա մէջ կ'ոչնչացնենք բարոյականութեան աղբիւրը:

Մանուկների կամքը պիտի դաստիարակել. դա մի

ուժ է, որին ուղղութիւն պիտի տանք, պէտք է ընտելացնենք կարգ ու կանոնի: Եւ այդ բոլորը պիտի անենք, տալով մանկանն էլ ազատութիւն, ի հարկէ ոչ այն ազատութիւնը, ինչպէս հասկանում է ամբոխը, այսինքն անելու այն ամենը, ինչ որ նրա խելքը փչում է:

Իրանց կրքերին գերի մարդիկ ազատ չեն, բառիս վսեմ նշանակութեամբ: Առաջին անգամ, հէնց որ մանուկը կարողանում է զսպել իր վատ ցանկութիւնները, վատ մտածմունքները, հրաժարւում է կատարել վատ խորհուրդը՝ նա արդէն սկսում է լինել ազատ. որովհետև այդ դէպքերում նա իրեն ազատեց օտար աղդեցութիւնների լծից և իր նորաբողոքով եսի հետ միասին կանգնեց դէմ առ դէմ արտաքին աղդեցութիւնների: Եթէ վաղն այդ մանուկը նոյն կերպ կընւածի իր քմահաճութիւնը, կը յաղթահարի իր սնափառութեանը, իր ուշադրութիւնը կը կենդրոնացնի ձանձրալի համարւած առարկայի վրա՝ կը սովորի դասը, փոխանակ խաղալու—այդ մանուկը կեանքի մէջ առաջ կընթանայ ուղիղ ձանապարհով:

Դաստիարակի նպատակը պիտի լինի մանուկների մէջ դարգացնել բարի սովորութիւններ, սովորեցնել նրանց լինել ազատ: Բայց ի՞նչպէս հասնել այդ նպատակին: Նախ դաստիարակողն ինքն լիովին պիտի հասկանայ իր պաշտօնի կարևորութիւնը: Նա պիտի կարողանայ ազդել մանկան ոչ միայն մտքի, այլև սրտի վրա: Դաստիարակի վրա դրւած է նւիրական պարտականութիւն. նա եթէ կամենում է ազդել իր սաների վրա, պիտի յուզի նրանց սիրտը. նրա խրատ-

ները պիտի լինեն ծանրակշիռ, հեղինակաւոր, ջերմ, որպէսզի ուղղակի ազդեն մանուկների սրտերի վրա: Իր պաշտօնին անձնէր ուսուցչի վարեցողութիւնը մանուկների հետ չի լինի իշխանական, սառը և խիստ: Ոմանք այդ տեսակ վարեցողութիւնը համարում են ուսուցչի բարձր դիրքի արտաքին նշան: Իսկական մանկավարժը իր հեղինակութեան և ազդեցութեան բարձրութիւնը հաստատում է փոխադարձ մտերմութեան վրա:

Ես չըզդիտեմ թէ ինչ են շահում մեծամտութեամբ և խստասրտութեամբ իրենց հեղինակութիւնը բարձր պահող ուսուցիչները. միայն ինձ համար պարզ է, թէ նրանք ինչ են կորցնում: Փորձով յայտնի է, որ խիստ ուսուցիչները մեծ ազդեցութիւն չեն ունենում մանուկների վրա, այլ վայելում են միայն կեղծ յարգանք: Երևի իւրաքանչիւրը կը յիշի, իր աշակերտութիւնից թէ ազդեցութիւն են ունեցել իրենց ուսուցիչներից ոչ թէ նրանք, որոնցից վախեցել են, այլ նրանք, որոնց սիրել են:

Բարոյականութեան դասը չը պէտք է աւանդել իբրև քրմական պատգամ: Վերացական կանոններին, բարոյական սկզբունքներին ձեր երևակայութեամբ տւէք կենդանութիւն, ջերմացրէք նրանց սրտաբուխ զգացմունքով. այդ տեսակ դասը կը լինի ոչ միայն հասկանալի, այլ և զգացւած: Հարկաւոր է այնպէս աւանդել, որ աշակերտը ոչ միայն գիտենայ, թէ ինչ է բարոյականութիւնը, այլ և գործադրի, վարւի նրա պատւէրի համաձայն:

Ս.

Պարզելով թէ ինչով նպատակին պէտք է ձգտել, մնում է խօսել այն միջոցների մասին, որով կարելի է գլուխ բերել այդ նպատակը. խնդրի դժւարութիւնն էլ հէնց այդտեղ է: Այդ բոլորը հեշտ է խօսքով ասել, բայց ինչպէս գործադրել: Բոլոր ուսուցիչներն միատեսակ չեն, և բոլոր մանուկներն էլ միևնոյն չափով չափած ու ձևած չեն: Իրականութեան մէջ մեզանից իւրաքանչիւրը տարբերում է միւսներից իր բնաւորութիւամբ, իր վարեցողութեան առանձնայատկութիւններով: Մանուկների հետ իւրաքանչիւրն ունի իր վարեցողութեան եղանակը, համաձայն իր սովորութիւնների և բնաւորութեան: Միւս դժւարութիւնն էլ մանուկների բնաւորութեան տարբերութիւնն է: Բոլոր ժամանակների մանկավարժներն ևս առաջարկում են իւրաքանչիւր աշակերտի համար սահմանել, ինչպէս ասում են յատուկ բարոյական դիպոստիկա: Այդ առաջարկութիւնը գլուխ բերել, ի հարկէ, դժւար է: Բայց դրանից դեռ չի հետևում, թէ հնարաւորութիւն չըկայ ծանօթանալու աշակերտների թերութիւնների, նրանց ընտանեկան բարոյական վիճակի, պարտազանցութիւնների հետ, որոնք բացատրում են մանաւանդ աշակերտի բնութիւնով և բնութեան զաղտնի շարժառիթներով: Մանուկը մի փակ գիրք չի, որը անկարելի լինի հասկանալ և ճանաչել: Մանկան աշխուժ և քնքուշ հասակը ստիպում է նրան անդադար ամեն մի բոլոր բրևան հանել իր զաղտնի հակումները:

Մանուկն իր վարմունքը չի կշռադատում, նա հետեւում է իր սրտի առաջին բերմունքին. նրա հայեացքը, շարժողութիւնները, աչքերը, դասարանում նիստ ու կացը, ընկերների հետ վարմունքը—այդ բոլորը պարզում են մեր առաջ աշակերտի բարոյական պատկերը: Ընդունակ մանկավարժը հնարաւորութիւն ունի աւելի խորը թափանցել աշակերտի հոգու ներքին կողմը: Մանկան բնաւորութիւնը մանաւանդ արտացոլում է հանգստեան ժամերին. ուսուցիչը կարող է օգտւել այդ ժամերից ուսումնասիրելու աշակերտի բնաւորութիւնը: Անհրաժեշտ է մոռացութեան չըտալ և մի գըլխաւոր հանգամանք, այն է՝ որքան էլ մանուկները տարբերեն միմեանցից բնաւորութեամբ, որքան էլ դանազան լինեն նրանց բնազդները, բայց և այնպէս բոլորն էլ ունեն մի ընդհանուր առանձնայատկութիւն—նրանք հակամիտ են դէպի բարին: Բացառութիւն են կազմում իբնէ յանցագործ-հիւանդ մանուկները, որոնց տեղը, ի հարկէ, հասարակաց դպրոցը չէ. այդպիսիներին հարկաւոր է դաստիարակել առանձին ուղղիչ հիմնարկութիւններում: Մանուկների ներքին կողմում թագնւած կան ազնուութեան, անկեղծութեան, ճշմարտասիրութեան սաղմերը. միայն հարկաւոր է հմտութեամբ զարգացնել այդ ուժերը, կեանքի հրաւիրել նրանց: Ահա այդ է իսկապէս դաստիարակութեան նպատակը, մանաւանդ բարոյական դաստիարակութեան:

Բ.

Բարոյականութեան ուսուցման մասին այստեղ կըրիշատակենք միայն ընդհանուր ցուցմունքներ, որովհետեւ մեր կարծիքով բարոյականութեան ուսուցման ամենալաւ ձևն այն է, որ մշակում է իւրաքանչիւր ուսուցիչ ինքն: Առանց մեր ասելու, ըստ ինքեան հասկանալի է, որ եօթը—ինը տարեկան մանուկների համար բարոյականութեան տեսական դասընթացք չի կարող լինել. այդ տեսակ դասընթացքը նրանց ուժերից չափազանց վեր է:

Այդ հասակի մանուկների մէջ պէտք է զարգացնել բարի սովորութիւններ և հակումներ. նրանց պիտի առաջնորդել դէպի ազնիւ խոհեր և գործեր. նրանց վրայից միշտ անպակաս պիտի լինի ուսուցչի մշտական և հեղ ազդեցութիւնը. և այդ ազդեցութիւնը աննկատելի պիտի թափանցի նրանց ներքին աշխարհը, համակի նրանց ամբողջ էութիւնը: Այդ նպատակին հասնելու համար առօրեայ կեանքի դէպքերը կարող են ծառայել իբրև նիւթ բարոյականութեան դասաւանդման. միայն հարկաւոր է այդ մասին հոգ տանել և յարմար առիթից օգտւել: Ուսուցիչն բոլորովին տողորւած պիտի լինի այն համոզմունքով, թէ ինքն մանուկներին ուսուցանում է բարոյականութիւն ոչ միայն այն ժամանակ, նրբ նրանց աւանդում է այդ առարկան, այլ և երբ սովորեցնում է քերականութիւն, թւաբանութիւն, երբ զրոյց է անում մանուկների հետ, երբ պատժում կամ գովում է նրանց. մէկ լսու-

քով՝ երեխաների հետ ունեցած իր բոլոր յարաբերութիւնների ժամանակ: Ուսուցիչը ամենևին չը պէտք է մոռանայ, որ իրանից ոչ այնքան պահանջուած է մասնակիներին դարձնել գերազանց մարդիկ, որքան պահանջուած է պատրաստել ազնիւ, իրենք իրենց զեկավարող և կեանքի վրա լրջութեամբ նայող մարդիկ: Այդ բնական, պարզ ուսուցումը աւելի աջողութեամբ կարող են գլուխ բերել ուսուցչուհիները, քան թէ ուսուցիչները: Արդէն վաղուց նկատուած է, որ մանկան ամենալաւ դաստիարակը մայրն է, որովհետև նա գիտի խօսել մանկան սրտի հետ, գիտի հմտութեամբ այդ սիրտը հնազանդեցնել իրեն և իշխել այնտեղ: Մօր այդ բնածին ճարտարութիւնը չունի հայրը: Հայրը պահանջուած է հնազանդութիւն, նա խօսում է մանկան հետ բարձրից և խիստ, ճնշում է նրան իր անձի զօրութեամբ, երբ հայրը բացակայում է, երեխաներն զգում են իրենց աւելի ազատ: Մայրը կամենում է սիրուած լինել, նա սիրալիր է, հաճոյակատար, մինչև անգամ երբ մայրը բացակայում է, մանուկը գտնուած է նրա հմայիչ ու հեզահամբոյր ազդեցութեան տակ: Կինը կարծես բնութիւնից կարգուած է մանուկների դաստիարակ լինելու, իր քնքշութեամբ ու սիրով ազդելու, իշխելու նրանց հոգու և սրտի վրա:

Գ.

Սօսենք այժմ, թէ ինչպէս պէտք է լինի բարոյականութեան ուսուցման ծրագիրը բարոյականութիւն,

բառի բուն իմաստով: Այդ ծրագիրը լայնածաւալ է և մեծ ազատութիւն է տալիս ուսուցչին: Պատմութեան, գրականութեան, բանաստեղծութեան մէջ ամփոփուած կան բազմաթիւ նիւթեր, որոնք կարող են դաստիարակիչ ազդեցութիւն ունենալ աշակերտների բարոյական զգացմունքների վրա: Բայց չը պէտք է կարծել, թէ այդ եղանակով մանուկների մէջ անպատճառ պէտք է բորբոքել հիացմունք և զարմանք, ուրիշ խօսքով՝ մանուկներին պէտք է զմայլեցնել հերոսութեան և առաքինութեան սխրագործութիւններով, Միայն այդպէս կարող է վարել նա, ով ամենևին չի հասկանում մարդու բնոյթն առհասարակ և մանկանն առանձնապէս:

Ամենից առաջ հոգ պէտք է տանել որ դպրոցական ուսուցումը չը նմանի մշտական բարոյախօսութեան: Այդպիսի քարոզչական խրատական ուղղութիւնը կազմում է գլխաւոր թերութիւնն այն բազմաթիւ զըրքերի, որոնք զըրում են մանուկների համար: Այդ զըրքերի մէջ միշտ խօսուած է բարոյական գործերի մասին: Այդ գըրքերում նկարագրուած բոլոր անձնաւորութիւնները մի-մի անմեղ հրեշտակներ են՝ կարծես նրանք բոլորն էլ օժտուած են ամեն տեսակ առաքինութիւններով, նրանց անձանօթ են մարդկային կըրքերը: Այդ բոլորը աւելի քիչ է ազդում մանուկների հոգու վրա, քան թէ կարծում են շատերը: Այդ բոլոր առաքինի վարմունքները, գործերը և սխրագործութիւնները ձանձրացնում են, իվերջոյ բթացնում են մանուկների բարոյական զգացումները:

Մանուկները լսելով դաւաճանութեան մասին մի պատմութիւն, կողերուն հայրենիքի վսեմ սիրով ոչ պակաս, եթէ ոչ աւելի՝ քան թէ շարունակ լսեն ու կարգան հայրենիքի համար կատարած քաջագործութիւնները ու անձնւորութիւնների նկարագրութիւնները: Առաջին դէպքում դայրոյթը կառաջացնի նրանց մէջ պարտքի զգացում: Բայց իհարկէ պատմութիւնը բարոյախօսութիւն չէ, նա հաւասար կերպով լոյս է սրբուում թէ մեծ առաքինութիւնների ու թէ մեծ շարագործութիւնների վրա:

Այդպէս պէտք է հասկանալ բարոյականութեան ուսուցման ամենասկզբնական դասընթացքը: Միայն հարկաւոր է հետզհետէ և անդադար գործնական օրինակներով նախապատրաստել մանկան հոգին և կամքը աւելի վերացական ուսուցման:

Միջին դասընթացքի ժամանակ դասատուութեան մեթօդը նկատելի չափով պէտք է ձևափոխել, բարոյականութեան ուսուցումը արդէն իր բարձրագոյն աստիճանին է սկսում մօտենալ: Բայց աչքի առաջ պիտի ունենալ, որ մանկան միտքը դեռ ևս բաւականաչափ զարգացած չէ, որ կարողանայ ըմբռնել վերացական կանոնի կապը մասնաւոր փաստերի հետ և այդ տեղից դուրս բերած եզրակացութիւնները գործադրել իր առօրեայ վարեցողութեան մէջ: Շատ անգամ աշակերտին հաղորդելով ընդհանուր և սովորական բարոյախօսութեան մի օրէնք, յետոյ մնում են զարմացած, թէ ինչու աշակերտի գլխում հետք անգամ չի մնացել այդ աւանդած դասից: Պատճառը պարզ է. վերացական

օրէնքն առանց օրինակի աշակերտի համար եղել է մի անբովանդակ, դատարկ ձայն: Այդ պատճառով առաջին հասակի մանուկներին բարոյականութիւն ուսուցանելու ժամանակ ամեն կերպ պէտք է խուսափել տեսական բացատրութիւններից և դատողական եզրակացութիւններից: Առանձին երևոյթները քննել և նըրանցից հանել ընդհանուր օրէնք, որ բացատրի մասնաւոր փաստերը, այդ մի դժուար աշխատանք է, իսկ ինը տասը տարեկան երեխայի համար աւելի դժուար և նրա ուժերից բոլորովին վեր է: Բայց և այնպէս չըկայ որ և է ուսում, որ չունենայ որոշ չափով իր ընդհանուր և տեսական մասը:

Դ

Ուսուցանել նշանակում է ստիպել հասկանալ, իսկ հասկանալ՝ նշանակում է երևոյթներից հանել օրէնքներ, այսինքն՝ պատասխանել ինչպէս և ինչու հարցումներին: Այդ պատճառով միջին դասընթացքի ուսուցման ժամանակ ուսուցիչը դասերի մէջ որոշեալ կարգ և կապ պիտի պահպանի, որպէսզի տարւայ վերջըն արդէն անցած լինի ընդհանուր և ամենապարզ ձևով անձնական և հասարակական բարոյականութեան դասընթացքը: Միայն այստեղ ևս բարոյականութեան դասընթացքը պիտի լինի ոչ տեսական, այլ գործնական և բովանդակութիւնը պիտի լինի ոչ թէ պարտքն առհասարակ, այլ պարտաւորութիւնները: Մինչև այժմ աշակերտներն արդէն ծանօթացած են լինում գործնական

կերպով իրանց պարտաւորութիւններէ հետ. հիմա հարկաւոր է մատնանիշ անել այդ պարտաւորութիւններէ վրա, իբրև ընդհանուր օրէնքների. հարկաւոր է արդէն ազգել մանկան ոչ միայն սրտի, այլ և մտքի վրա: Այսուհետև աշակերտի միտքը պիտի հարստանայ աւելի որոշ կանոններով, հաստատուն սկզբունքներով, ընդ որոշ կանոններով, որպէսզի նա կարողանայ առողջամտութեամբ դատել իր և մերձաւորի վարմունքը: Այդ կողմից փիլիսոփաների և բարոյախօսների գրեւածքները նոր զարգացող աշակերտի մտքին խորհրդածութեան առատ նիւթ կարող են մատակարարել: Օրինակ. «Մի արէք ուրիշներին այն բանը, ինչոր չէք կամենայ, որ ուրիշներն անեն ձեզ»: Ահա մի սկզբունք, որ գրեւած է համայն մարդկութեան գիտակցութեան մէջ, որը հեշտութեամբ կարելի է հասկանալի անել և մէջ, որը հեշտութեամբ կարելի է հասկանալի անել և մանուկներին, բացատրելով նրանց այն պարտաւորութիւնները, որոնք բխում են բոլոր մարդոց միմեանց հետ ունեցած ընդհանուր շահկապից և նրանց փոխադարձ իրաւունքից և պարտքից:

Եւ այսպէս, կարելի է ընդհանուր օրէնք համարել հետևեալը. վարմունքը վատ էլ եթէ չի կարելի ցանկանալ, որ բոլոր մարդիկ էլ վարեն այդպէս: Այսպիսի մի միտք ուսուցիչը կարող է հազարաւոր օրինակներով ու ձևերով արժատացնել մանկան մտքի մէջ. օրինակ. «Դու յափշտակել ես քո դրացի աղջկայ տիկնիկը. դու ընկերոջդ տւած խօսքը չես պահել. դու ինքքըդ ի՞նչ կասես, եթէ այն աղջիկն էլ վերցնի քո տիկնիկը, եթէ ընկերդ էլ չը կատարի քեզ տւած խօսքը:

Եւ ինչ, կարծում ես կարելի է միասին ապրել, միշտ յափշտակելով միմեանց տիկնիկները և չըկատարելով ընկերոջդ տւած խօսքը»: Մանուկն այնուհետև կը հասկանայ բարոյական օրէնքը, եթէ այդ ձևով է նրան բացատրւած. և հետզհետէ կըսովորի իր և ուրիշի վարմունքը դատել այդ լուսաբանութեամբ:

Դրանից յետոյ արծարծեցէք մանկան մէջ ճշմարիտ բարեկամութեան գաղափարը. ցոյց տւէք թէ սրբան անկեղծութիւն, անշահասիրութիւն ու փոխադարձ անձնիրութիւն կայ թագնւած այդ ընկերասիրական զգացման մէջ: Բերէք Մօրտէնից հետևեալ կտորը. «Բարեկամութեան մէջ մարդոց հոգիները միմեանց հետ այն աստիճան միախառնուում, ձուլուում ու մի ամբողջութիւն են կազմում, որ նրանց միացնող կարերը ի վերջոյ ջնջուում, անհետանում են»:

Առաձնները յաճախ ժողովրդի իմաստութեան ըսքանչիւի եզրակացութիւններն են: Ժողովրդական շատ առաձների մէջ ամբողջովին ամփոփւած է բարոյականութիւնը. և միտքն արտայայտւած է լինում զարմանալի պարզ և հակիրճ կերպով: Ենթադրինք թէ մի աշակերտ իր արժանիքի համաձայն չի ստացել վարձ կամ պարգև, և նա այդ մասին ձեզ գանգատուում է: Ահա ձեզ մի առիթ աշակերտին բացատրելու, թէ մենք պարտաւոր ենք գործիլ բարիք, առանց որ և է ակնկալութեան, թէ բարի գործը փնհատելի է ինքն ըստինքեան առանց շահի, թէ մենք պարտաւոր ենք բարիք անել անկախ նրա հետ կապւած վարձատրութիւնից և անյարմարութիւններից: Ձեր խօսքերի եզ-

բակացութեան հաստատութեան համար կարող էք օրինակ բերել ժողովրդական առածներէց, որոնց մէջ ձեր բացատրութեան ճշմարտութիւնն արտայայտուած կը լինի պարզ և հակիրճ. և այդ աւելի զօրեղ կազդի ձեր սաների վրա, քան թէ երկայն ու բարակ դատողութիւնները:

Եթէ ինձ յանձնուած լինէր միջին դասընթացքի բարոյականութեան ուսուցչի պաշտօն, ես իւրաքանչիւր շաբաթուայ համար կը վերցնէի որոշեալ կարգով ու կապով մի ընդհանուր բարոյական սկզբունք, օրէնք, առած. կընտրէի դրա համար ընթերցանութեան նիւթ, կը պատրաստէի հարցումներ. և ամբողջ ուսուցումն այն պէս կը տանէի, որ նա կը լինէր մի կենդանի բացատրութիւն իմ առաջադրած սկզբունքի: Այդ ձևով ես կանցնէի տարւայ ընթացքում որոշեալ շրջան անհատական և հասարակական բարոյականութեան:

Քերականութեան ուսուցման համար դուք աշակերտներին հաղորդում էք ընդհանուր կանոններ. այդ կանոնները հանում էք օրինակներից և յետոյ առաջարկում համապատասխան խնդիրներ: Նոյն իսկ այդ ձևով էլ պէտք է աւանդել միջին դասընթացքի բարոյականութեան դասը: Այդ դասն էլ իր տեսակի մի քերականութիւն է, միայն բարոյական գիտակցութեան և կամքի:

Վերին դասընթացքը պէտք է լինի իսկական բարոյագիտութեան ուսուցում: Եւ մեր կարծիքով այդ տեղ ուսուցչի գործն աւելի հեշտանում է: Այդ կարծիքը թերևս շատերին զարմանալի թւայ: Այդ դասընթացքն աւանդելու համար դուք կարիք չունէք նիւթը պատ-

րասանել, մշակել. նա արդէն պատրաստի գտնուած է ձեր բարոյական գիտակցութեան մէջ, լուսաբանուած ձեր կարողացած գրքերով, ձեր ստացած կրթութեամբ. իսկ մեթօդը կը լինի ձեր մտքերի բնական և տրամաբանական կապը: Ազատութիւն, պարտք, պատասխանատուութիւն, պարաաւորութիւններ դէպի իր անձն ու մերձաւորը, մարդկայնութիւնը, հայրենիքը, ընտանիքը,—ահա հիմնական մտքեր, որ դուք կարող էք արծարծել, ընդարձակել և լուսաբանել:

Ե.

1004
1591

Բարոյական սկզբունքների տեսական ուսուցումը մասնաւանդ աւելի կարևոր է օրիորդաց դպրոցներում: Աղջկայ մէջ զգացումն աւելի զարգացած է, քան թէ տղայոց մէջ: Նրանց մէջ (աղջկանց) բանականութիւնը աւելի մեծ դեր է կատարում, քան թէ դատողութիւնը: Ահա այդ պատճառով աղջիկներն աւելի ընդունակ են մասնաւոր փաստերն ըմբռնելու, նրանցով հետաքրքրելու. նրանք դիւրագոյց են, տպաւորւող, շուտով վրդովւող, գթաշարժող: Հմուտ դասախարակչուհին առաջին տարիներում կարող է օգտուել աշակերտուհիների այդ յատկութիւններով բարոյականութեան դասատուութեան ժամանակ: Վերին դասարանում հարկ կը լինի աւելի լրացնել, քան թէ զարգացնել նրանց մէջ թափուած այդ ընդունակութիւնները: Զգայնութիւնը և երեւակայութիւնը թանգագին պարզենք են, բայց եթէ միայն նրանք գտնուում են հոգեկան բարձր

ուժերի ղեկավարութեան ներքոյ: Պատկալը նրանց անւանում է մոլորութեան և ստութեան պատճառներ: Շատ կարևոր է որ այդ խառնակ ուժերը ընտելացնենք կարգ ու կանոնի, որ նրանք բռնեն իրանց համար նըշանակեա՞ծ երկրորդական տեղը, գերիշխանութիւնը թողնելով հոգու այն իսկական ուժերին, որոնք միայն ընդունակ են հաստատուն մնալու և կեանքի մէջ միութիւն ու ներդաշնակութիւն մտցնելու: Այդ պատճառով բարոյականութեան տեսութեան ուսուցումը մի անհրաժեշտ ամբողջացումն է բնաւորութեան դաստիարակութեան, մանաւանդ օրիորդաց դպրոցներում:

Այդ դպրոցների աշակերտուհիները կը հասկանան այն, ինչոր միայն զգում էին. ձեռք կը բերեն լուրջ մտքերի պահանջ և դուրս կը գան դպրոցից ոչ թէ միայն գլխները օգտակար տեղեկութիւնների պաշարով լցրած, այլ և մտաւոր և բարոյական կողմից բոլորովին վերանորոգւած:

2.

Ամփոփենք մինչև այժմ մեր ասածները: Ստորին դասարաններում ուսուցանում են փաստի բարոյականութիւնը: Միջին դասարաններում փաստերից պէտք է եզրակացնել բարոյականութեան կանոնները: Վերին դասընթացքում ուսուցիչը հաղորդում է աւելի ընդհանուր սկզբունքներ:

Նախքան խօսքս վերջացնելը հարկաւոր եմ համարում մի քանի բառ ասել այն հիմնական մտքի մասին, որ կազմում է գրքիս գլխաւոր նիւթը: Դուք, ուսուցիչներդ,

չըպէտք է մտածէք աշակերտների փոխարէն, այլ սովորեցնէք, որ իրանք մտածեն. ով մտածում է անկախ, նա էլ կարող է դատել և գործել անկախ: Բարոյական ճշմարտութիւններն աւանդեցէք ձեր աշակերտներին ոչ իբրև ձեռնարկ կամ քարոզ, այլ շարունակ հարցումներ տալով, ընտելացրէք աշակերտներին, որ իրանք գտնեն և արտայայտեն այդ ճշմարտութիւնները: Այդ ձևը նոր չէ, երկու հազար տարուց աւելի առաջ գործադրել է: Սոկրատն է նրա առաջին հեղինակը: Սոկրատն այդ միջոցը գործադրում էր իր հակառակորդների վերաբերմամբ, որոնց ստիպում էր շփոթելու ու շարւելու: Բայց այդ ձևը նա գործադրում էր և իր աշակերտներին, իր բարեկամներին ուսուցանելու ժամանակ... «Ճշմարտութիւնը տրւում է ոչ արտաքուստ, նա մեր ներսն է, հարկաւոր է միայն որոնել նրան», ասում էր Սոկրատը. եւ ինքն օգնում էր իր աշակերտներին ճշմարտութիւնը որոնելու, անդադար տալով նրանց հարցումներ: Նա այդ ձևն անւանում էր մտաւոր մանկաբարձութեան մի արւեստ, որ օգնում է լոյս աշխարհ բերելու ճշմարտութիւնը:

Այսպիսի մտաւոր մանկաբարձութեան արւեստով դուք կը հասնէք ձեր նպատակին, կը պատրաստէք ձեր աշակերտներին լինելու ազնիւ մարդ և բարի քաղաքացի:

Թող ձեզ լաւագոյն խրախոյսը լինի Սոկրատի հեղինակութիւնը, այն մեծ մարդու, որ իր փոքր ձում է դարէց դար և որ պատանիների գոհացումն էր նամե՞ծ դաստիարակն է եղել:



IX Մանուկների աշխատանքն ընտանիքում.—Ակ-
սէլ Արստալի, թարգմ. Մ. Ասիլեանցի: 15 կ.

X Տղան և աղջիկը անցողական շրջանում—Բու-
լի և Նելսէնի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: 10 կ.

XI Մանկական ազատութիւնն ու ուրախութիւ-
նը—Օտտօ Էրնստի, թարգմ. Լ. Բարայեանի 20 կ.

XII Փողովրդական մանկական խաղեր, խմբա-
գրեց Ստ. Լիսիցեան: 20 կ.

XIII Ընտանեկան յարաբերութիւններն ու նը-
րանց կրթիչ նշանակութիւնը,—Ա. Ն. Օստրոգորսկու,
թարգմ. Լ. Շ. 20 կ.

XIV—XV Մանկան հոգին—պրօֆ. Սիկորսկու,
թարգմ. Միս. Աս. և Ստ. Լ. 45 կ.

XVI Ժառանգականութիւնը և դաստիարակու-
թիւնը—Ռուզօլֆ Լեմանի, թարգմ. Լ. Բարայեանի 15 կ.

XVII Դաստիարակութեան իզէպնները, Ռուզօլֆ
Լեմանի:—Մանկան հոգեկան կեանքի զարգացումը
թարգմ. Լ. Բարայեանի 20 կ.

XVIII Ընտանեկան թատրոն.—Վ. Բ. թարգմ.
Միս. Ասիլեանի 20 կ.

XIX Մանուկը բնութեան մէջ. Ա. Արստալի.
թարգմ. Մ. Ասիլեանի 15 կ.

ԱՄԲՈՂՁ ՇԱՐԻ ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ 15 ԿՈՊ.

Ճանապարհածախսը՝ 1 ուրբուց ոչ պակաս զը-
նողների համար խմբագրութեան վրա է՝

Հասցէն՝ Тифлисъ, Редакция „Аскеръ“

ԳԻՆՆ Է 15 ԿՕՊԷԿ

«Ազգային գրադարան»



NL0152184

